Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-5
W-81

91.5(2-5
Ա-

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՏԱՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

(Ցերակաճական ամենակարեւոր գիտելիքներ տարրական եւ միջնակարգ դպրոցների ուսումնական գաւառակների հայ մանուկների համար).

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

425
33-ԱՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի
1908

20 FEB 2013

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

4-82 ստ
5.
Г-2516
425
33-ԱՐ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
16333

Ա. ԵՐԵՐԱՆԵԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

(Գերազանցապես ամենակարեւոր գիտելիքներ տարրական եւ միջնակարգ դպրոցների ստորին դասարանների հայ մանուկների համար).

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գան. Ա. Ադամեան
Հ. Ա. Ադամեան
Գանձակ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի
1903

5962

Дозволено цензурою. Тифлисъ, 14-го Іюля 1903 г.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Արդէն անհերքելի ճշմարտութիւն է, որ ամէն մի ազգ ունի իւր սեպհական լեզուն և այդ լեզուին յատուկ հնչիւններ ու դարձուածքներ՝ որոշ կանոններով հանդերձ, այսինքն՝ քերականութիւն։

Մենք էլ նոյնպէս՝ բացառութիւն չկազմելով օտար ազգերից, ունինք մեր մայրենի լեզուի քերականութիւնը, որով և գիտակցաբար հաղորդում ենք մեր մտքերը միմեանց։

Գիտակցաբար ասացինք, որովհետև առհասարակ այն մարդիկ, որոնք անտեղակ են իրանց լեզուի արհեստին, այլ կեանքի մէջ միայն վարժութեամբ են սովորել լեզուն, խօսակցութեան ժամանակ իրանք էլ չեն հասկանում, թէ ուղիղ թէ անուղիղ են խօսում, ինչպէս և գրելու ժամանակ չգիտեն իսկապէս՝ կանոնաւոր են դասաւորել իրանց մտքերը, թէ անկանոն և այլն։

Սոյն համառօտ դասագիրքը, որը մենք ցանկանում ենք նուիրել հայ մանուկներին, մանաւանդ նրանց, որոնք դեռ իրանց մայրենի լեզուին անտեղեակ, մտնում են պետական դպրոցները օտար լեզուներ սովորելու համար, անուանեցինք «Տարրական»—սկզբնական կամ վարժողական,—որովհետև սրանով հայ մանուկը ոչ թէ պիտի ընտելանայ իւր մայրենի լեզուի ընդհանուր օրէնքներին մանրամասնօրէն, այլ միայն նրա քերականական գլխաւոր գիտելիքներին, այսինքն այնպիսիներին, որոնք անհրաժեշտ են նրան իւր մտքերը մայրենի լեզուի միջոցաւ կանոնաւոր կերպով, թէ գրաւոր և թէ բերանացի, ուրիշին հաղորդելու, և բացի այդ՝ նաև պետական լեզուի քերականական գիտելիքները դիւրին և հաստատուն կերպով ըմբռնելու և հասկանալու համար, ինչպէս որ մենք փորձել ենք մեր՝ մօտ քառասնամեայ ուսուցչական գործունէութեան մէջ։ Այդ իսկ պատճառով աշխատել ենք, որքան կարելի էր, ձևակերպել սա ռուսերէն լեզուի ամենատարածուած

տարբական քերականութիւններին համաձայն։

Որովհետև քերականական արուեստը սովորելու համար ամեն մի ազգի լեզուի մէջ չորս գլխաւոր տարերք կան, այն է՝ հնչիւն կամ տառ, վանկ, բառ և բան կամ նախադասութիւն, ուստի և մեր այս գրքոյկը բաղկացած է չորս բաժնից։

Առաջին բաժնում խօսուած է տառերի, նրանց բաժանման և գործածութիւնների մասին։

Երկրորդում—վանկերի, նրանց կազմութեան և տողադարձութեան կանոնների մասին։

Երրորդում—բառերի, նրանց նշանակութիւնների, դասակարգութեան կամ բանի մասունքների և նրանց գործածութիւնների մասին և այլն։

Չորրորդում—նախադասութիւնների, նրանց գլխաւոր տեսակների և կէտադրութեան մասին։

Մանուկներին աւանդելի դասերի նիւթերը և նրանց բաժանումները դրուած են գրքոյկիս մէջ հետևական դասաւորութեամբ, առանց շեղուելու լեզուի բնական օրէնքից, այսինքն առանց որևէ թռիչք կամ յետադարձութիւն անելու։

Դասագրքիս մէջ ամեն մի աւանդելի դասի վերջում վարժութեան օրինակներ թէպէտ դրուած են, բայց սակաւաթիւ, որովհետև հմուտ և իւր գործը գիտցող ուսուցչի համար արդէն պատրաստի վարժեցնող ձեռնարկ կարող է ծառայել և մանուկի ընթերցանութեան գիրքը, այդ իսկ պատճառով ցանկալի էր, որ այս քերականական ամենակարևոր գիտելիքները դասախօսուէին աշակերտներին իրանց ընթերցանութեան և թելատրութեան դասերի հետ անբաժան։

Գրքոյկիս չորրորդ բաժնի վերջում, իբրև յաւելուած, դրուած են միքանի դիւրըմբռնելի հատուածներ և յօդուածներ թելադրութեան, վերլուծման և բառընտրութեան համար։

Իրաւի, մենք մեզ բարոյական տեսակէտից բոլորովին վարձատրուած կըհամարենք, եթէ այս մեր փոքրիկ աշխատասիրութիւնը իւր նպատակին ծառայէ և մեր հայ մանուկներին տայ այն օգուտը, որը ցանկանում և սպասում է

աշխատասիրողը։

Ծուլիս, 1903 թ.

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՏԱՌԵՐ

§ 1. *Ի՞նչ է տառը։*

Տառերը մարդկային լեզուի ամենասարգ հնչիւններն են, որոնք՝ եթէ թղթի վրայ ձևակերպուեն, կոչւում են *գրեր*։

Հայերէն լեզուն երեսունեուկ գիր ունի—ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ։

Սրանք բաժանւում են երկու տեսակի՝ 1) *ձայնաւոր* և 2) *բաղաձայն*։

§ 2. *Ձայնաւոր տառերի մասին։*

Ձայնաւոր կոչւում են այն տառերը, որոնք հընչւում են իրանց յատուկ ձայներով, առանց ուրիշ տառերի օգնութեան։

Հայերէն լեզուի մէջ երկու տեսակ ձայնաւորներ են լինում՝ 1) *պարզ* և 2) *երկբարբառ*։

Պարզ ձայնաւորները հօթն են—ա, ե, է, ը, ի, ո, օ։

Երկբարբառները ութն են—այ, աւ, եա, եօ, եւ (և), իւ, ոյ, ու։

§ 3. *Բաղաձայն տառերի մասին։*

Բաղաձայն կոչւում են այն տառերը, որոնք առանց ձայնաւոր տառերի օգնութեան չեն կարող հնչուել. սրանք երեսունեմեկ հատ են—բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, ֆ։

Սրանցից երկուսը—յ, ւ,—ձայնաւորների հետ միանալով, կազմում են երկբարբառ ձայնաւորները։

§ 4. *Բաղաձայների տեսակները։*

Հայերէն լեզուի բաղաձայն տառերը սովորաբար երեք տեսակ են հնչում—թաւ, միջակ, և նուրբ, այդ պատճառով էլ լինում են *թաւ, միջակ,* և *նուրբ* բաղաձայներ, որոնք և կոչւում են *լծորդատառեր։*

Ահա նրանց աղիւսակը։

Թաւ	թ	շ	չ	ց	փ	ք	զ	խ	հ	ռ	վ
Միջակ	դ	ժ	ջ	ձ	բ	գ	—	—	—	—	—
Նուրբ	տ	ս	ճ	ծ	պ	կ	ս	ղ	յ	ր	ւ

Այս լծորդատառերը հարկաւոր է անշուշտ իրանց ճիշտ հնչիւններով արտասանել, որպէսզի մէկը միւսի տեղ չգործածուի ուղղագրութեան մէջ, որովհետև նրանք շատ անգամ բառի նշանակութիւնը փոխում են, օր. *բանիր—պանիր, զարի—կարի—քարի, ղար—տար, զուր—սուր* և այլն։

§ 5. *Պարզ ձայնաւորների գործածութիւնը։*

1. Պարզ ձայնաւորներից *ե* և *է*, *ո* և *օ* տառերը թէպէտ բառերի մէջ նոյնանման հնչիւններ ունին, բայց շատ անգամ մէկը միւսի տեղ դրուելով՝ բառի նշանակութիւնը փոխում են՝ *սէր—սեր, մեզ—մէզ, հօր—հոր, հոտ—հօտ* և այլն։

2. *Ե* և *օ* ձայնաւորները բառերի վերջը չեն դրւում, այլ *ե* տառի տեղ գործ է ածւում *է*, իսկ *օ* տառից յետոյ միայն բաղաձայն կարող է լինել—*Մարգարէ, Գայանէ, կուտէ, կրգրէ. տօն, զրօշ* և այլն։

Միմիայն օտար լեզուներից վեր առած բառերի և ռամկական լեզուի մէջ կրճատուած անունների վերջը *օ* տառը գործ է ածւում—*Ռուսսօ, Կարնօ, Մաքօ, Կարօ, Ցովօ* և այլն։

3. *Ե* և *օ* ձայնաւորները բառերի սկիզբն հնչում են իրանց իսկական ձայներով, իսկ բառերի մէջ *ե* տառը հնչում է՝ ինչպէս կարճ *է*, իսկ *ո*—ինչպէս *օ*—*երկինք, երկիր, ոսկի, ոսոխ. զնդեցիկ, կնրակուր, երկրորդ, գող* և այլն։

Միայն *վ* տառից առաջ բառերի սկիզբը *ո* հնչում է՝ ինչպէս *օ*—*ով, ովկիանոս* և այլն։

§ 6. *Երկբարբառների գործածութիւնը։*

1. *Այ* և *ոյ* երկբարբառները բառերի սկիզբը և մէջը պահում են իրանց ձայնը, իսկ բառերի վերջը նրանք յամր են մնում—լսւում է միայն *ա* և *ո* տառերի ձայնը—*այգի, այսօր, տղայական, ծառայութիւն. ընոյս, կոյս, լոյս։ Աղքայ, ընկայ, ընծայ, յետոյ, ոշխոյ* և այլն։

ա) Խոտորւում են միքանի բառեր, որոնց վերջը *այ* և *ոյ* երկբարբառները իրանց ձայնը պահում են—*հայ, վայ, խոյ, նոյ* և այլն։

բ) Հրամայական ձևի բառերի, յատուկ անունների (ասա, գնա, խաղա, Ցուդա, Ռուսիա, Մոսկուա) և հետևեալ բառերի վերջը—սա, դա, նա, որա, դրա, նրա, ահա, ապա, քո—յ տառը վերանում է։

2. Ու երկբարբառը բառերի սկիզբը և մէջը, եթէ իրանից յետոյ բաղաձայն ունի, հնչւում է ինչպէս *իու*, իսկ բառերի վերջը և ձայնաւորներից առաջ՝ ինչպէս *իվ*—*իւղ*, *հիւր*, *ընիւղ*. *թիւ*, *հաշիւ*, *հիանալ* և այլն։

3. Ու երկբարբառը բառերի սկիզբը և վերջը պահում է իւր սովորական հնչիւնը, իսկ բառերի մէջ ձայնաւորներից առաջ հնչւում է ինչպէս մեղմ *վ*—*ուսում*, *լեզու*. *Աստուած*, *վարուել*, *աղուէս*, *գրուել*, *փրկուել* և այլն։

4. Եա երկբարբառը բառերի սկիզբը չի գործածւում, մէջը՝ իւր ձայնով է հնչւում, իսկ վերջն անձայն *յ* է ընդունում—*մանեակ*, *լանեակ*, *ոսկեայ*, *արծաթեայ* և այլն։

5. Մի երկու տեղ և տառից յետոյ պատահում է *օ* և կազմում է *եօ* երկբարբառը—*եօթը*, *արդեօք*, *կարծեօք*։

§ 7. *Բաղաձայների գործածութիւնը։*

1. *Վ* բաղաձայնը միայն բառերի սկիզբն է գործածւում, իսկ բառերի մէջ *ո* ձայնաւորից յետոյ—*վարդան*, *վազը*, *վրէժ*, *ժողովել*, *գորովագութ*, *կով*, *ծով*, և այլն։

Միւս բոլոր տեղերում *վ* տառի տեղ *ւ* կամ *ու* է գրւում—*կռուել*, *կռում է*, *թում է*, *հաշուել* և այլն։

Խոտորւում են բարդ և ածանցեալ բառերը, որոնց մէջ *վ* տառը գրւում է նաև միւս ձայնաւորներից, ինչպէս և բաղաձայներից յետոյ—նաւավար, կառավարել, հոդեվարք, անվաւեր և այլն։

2. Բաղաձայն *ը*, *ա*, *փ* տառերից առաջ յաճախ *ն* փոխւում է *մ* տառի—*ամբարիշտ*, *ամիտիկ*, *ամպարտաւան* և այլն։

§ 8. *Գլխատառերի գործածութիւնը։*

Հայերէն լեզուի մէջ գլխատառեր գործ են ածւում հետևեալ տեղերում.

1. Իւրաքանչիւր նոր խօսքի սկզբում։—*Կայէնն սպանեց Աբէլին։*

2. Վերջակէտից յետոյ։—*Լուսացաւ։ Ամեն մարդ շտապեց իւր գործին։*

3. Յատուկ անունների սկզբում։—*Արամ*, *Երասխ*, *Արագած*, *Էջմիածին։*

4. Սրբազան անունների, պատուանունների և տիտղոսների սկզբում։—*Աստուած*, *Փրկիչ*, *Կաթուղիկոս*, *Վեհափառ Տէր*, *Նորին Աքայական Մեծութիւն* և այլն։

5. Ոտանաւորների իւրաքանչիւր տողի առաջին բառի սկզբում։

Ուրախութիւն քեզ անպակաս,
Ո՛վ դու մանուկ սիրելի,
Ծլիս, ծաղկիս ու զօրանաս,
Տալով պտուղ արժանի։
(Ս. Շահ.-Ազիզ.)

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՎԱՆԿԵՐ

§ 1. *Ի՞նչ է վանկը։*

Բառի այն մասը, որը մի անգամով է արտասանւում, կոչւում է *վանկ։—Մարմին* բառը կազմուած է երկու վանկից—*մար-մին։*

Վանկը կազմւում է կամ մի ձայնաւորից (թէ պարզ և թէ երկբարբառ) կամ ձայնաւորի և բաղաձայների միաւորութիւնից։—*Ե-կե-ղե-ցի։ Ու-սում։ Այ-գի։*

Իւրաքանչիւր բառի մէջ որքան որ ձայնաւոր լինի, այնքան էլ վանկ կունենայ այդ բառը։

Վանկերի թուին նայելով՝ բառերը լինում են *միավանկ, երկավանկ եւ բազմավանկ։—Քար միավանկ է։ Երկեր երկվանկ է։ Էջմիածին բազմավանկ է։*

§ 2. *Ինչպէս պէտք է վանկել բառերը։*

1. Եթէ բառի մէջ երկու ձայնաւոր կան, նրանցից երկրորդը միանում է հետեւեալ վանկին,—*է-ակ, գի-ակ, թի-ակ* եւայլն։

2. Եթէ բառի մէջ մի բաղաձայն կայ, պէտք է միացնել իրանից յետոյ եղող ձայնաւորին,—*քա-քակ, կա-բապ, սե-ղան* եւայլն։

3. Եթէ բառերի մէջ երկու կամ աւելի բաղաձայն կան, նրանցից միայն վերջինը միանում է իրանից յետոյ եղող ձայնաւորին, իսկ միւսները մնում են նախորդ վանկի մէջ,—*ար-ջանիկ, թարգ-ման, երկ-նատր* եւայլն։

4. Եթէ բառերի սկիզբը երկու կամ աւելի բաղաձայն կան, հարկաւոր է առաջին վանկի մէջ *ը* աւելացնել,—*ըր-նա-կիչ, տըր-տունջ, ծըն-ծա-ղիկ* եւայլն։

5. Եթէ բառերի վերջը երկու կամ աւելի բաղաձայն կան, հարկաւոր է նրանց միացնել իրանից առաջ եղող ձայնաւորին,—*հան-գա-մանք, մե-ծա-յարգ, դա-տարկ* և այլն։

6. Իսկ եթէ բաղաձայներից վերջինը *ն* կամ *ր* լինին, այն ժամանակ նրանք իրանցից առաջ եղող բաղաձայն տառի հետ առանձին վանկ են կազմում՝ *ր* տառի օգնութեամբ,—*կայ-սրը, ծա-նրը, քե-ռըն, մնա-սրն* եւայլն։

§ 3. *Տողադարձի կանոնները։*

Բառերը մի տողից միւսը փոխադրելու կանոնը կոչւում է *տողադարձ։*

Տողադարձի ժամանակ հարկաւոր է բառերն ուղիղ վանկերի վերածել՝ վերոգրեալ կանոններին համաձայն (§ 2)։

Բացի այդ պէտք է գիտենալ և հետեւեալը.

1. Միավանկ բառերը չեն կարող մի տողից միւսը փոխադրուել։

2. Երկբարբառ ձայնաւորներն անբաժան են մնում։

3. Բառերը մի տողից միւսը փոխադրելու ժամանակ տողի վերջը դրւում է մի փոքրիկ գիծ, որ կոչւում է *ենթամնայ* (-)։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՐ

§ 1. Ի՞նչ է բառը։

Մէկ կամ աւելի վանկ, որ իւր մէջ մի միտք կամ նշանակութիւն է պարունակում, կոչւում է *բառ*,—երգ, գաբի, դանակ—*բառեր* են։

Բառերը լինում են՝ *պարզ* և *բարդ*, *նախատիպ* և *ածանցեալ*։

---

§ 2. *Պարզ եւ բարդ բառեր։*

Այն բառերը, որոնք միայն մի նշանակութիւն են պարունակում իրանց մէջ, կոչւում են *պարզ*,—հայ, ձեռք, բաբի, չար,—*պարզ* բառեր են։

Այն բառերը, որոնք երկու կամ աւելի բառերից են կազմուած, կոչւում են *բարդ*,—բարեկամ, ջրկիր, հացթուխ, չարասիրտ, առևտուր, աղուհաց—*բարդ* բառեր են։

Բարդ բառերը կազմում են կամ առանց յ ո դ ա կ ա պ տառերի կամ նրանց օգնութեամբ. յոդակապ տառերը հինգ են—ա, ե, ի, ու, և. օր. հացթուխ, ջրկիր, կառավարել, բարեկամ, բանիրուն, կերուխում, առևտուր։

§ 3. *Նախատիպ եւ ածանցեալ բառեր։*

Այն բառերը, որոնք ուրիշ բառերից չեն առաջ եկած և իրանց սկզբնական տիպը կամ կերպարանքը անփոփոխ են պահել, կոչւում են *նախատիպ*,—ձայն, ջուր, մատ, մարդ—*նախատիպ* բառեր են։

Իսկ այն բառերը, որոնք սկզբից կամ վերջից այլ-այլ մասնիկներ են ընդունել, կոչւում են *ածանցեալ*,—անձայն, ձայնաւոր, ձայնաւորութիւն, *ա*մարդի, մարդկութիւն, մարդկային—*ածանցեալ* բառեր են։

---

§ 4. *Բանի մասունքները։*

Իւրաքանչիւր բառ, առանձին վեր առած, կազմում է բանի կամ նախադասութեան մի մասը։

Բանի մասունքը ինն են՝

ա. Գոյական անուն։	ե. Բայ։
բ. Ածական անուն։	զ. Նախադրութիւն։
գ. Թուական անուն։	է. Մակբայ։
դ. Դերանուն։	ը. Շաղկապ։

թ. Միջարկութիւն կամ ձայնարկութիւն։

Սրանցից առաջին հինգը խօսքի մէջ գործածուելիս փոփոխում են են իրանց վերջաւորութիւնները, ուստի և կոչւում են *փոփոխական* մասունք բանի, իսկ մնացեալ չորսը *անփոփոխ* են։

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 5. *Ի՞նչ է գոյական անունը։*

Իւրաքանչիւր առարկայ ունի իւր առանձին անունը, որը քերականութեան մէջ կոչւում է *գոյական անուն*,—*մարդ, քաղաք, փայտ, անուն, զօրութիւն*—*գոյական անուններ են։*

Գոյական անունները երեք տեսակի են բաժանւում՝ 1) *յատուկ*, 2) *հասարակ* և 3) *հաւաքական։*

1. *Յատուկ* կոչւում է այն անունը, որ տրւում է մի որևէ առարկայի՝ նրան իւր նման ուրիշ առարկաներից տարբերելու համար,—*Տփխիս, Արագած, Արաքս, Արամ, Ջիրակ*—*յատուկ անուններ են։*

2. *Հասարակ* կոչւում է այն անունը, որը շատ միատեսակ առարկաների է պատկանում,—*սեղան, տուն, քաղաք, գետ, գիւղ*—*հասարակ անուններ են։*

3. *Հաւաքական* կոչւում են այն միատեսակ առարկաների անունները, որոնք միասին վեր առած՝ մի ամբողջութիւն են կազմում,—*անտառ, գունդ, երամ, հօտ*—*հաւաքական անուններ են։*

---

§ 6. *Առարկաների տեսակները։*

Առարկաները երկու տեսակի են բաժանւում—*նիւթական* և *մտաւոր։*

Նիւթական կոչւում են այն առարկաները, որոնց մենք ճանաչում ենք մեր հինգ զգայարաններով—*տեսանելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով* և

ճաշակելիքով.—*բամբակ, երկաթ, խնձոր, վարդ, զանգ*—*նիւթական առարկաներ են։*

Մտաւոր կոչւում են այն առարկաները, որոնց ոչ թէ մեր հինգ զգայարաններով ենք ճանաչում, այլ մտքով ենք ըմբռնում,—*սէր, իմաստութիւն, մտածմունք*—*մտաւոր առարկաներ են։*

Նիւթական առարկաներն, իրանց կարգին, երկու տեսակ են լինում—*շնչաւոր* և *անշունչ։*

Շնչաւոր կոչւում են այն առարկաները, որոնք իրանց ազատ կամքով կարող են մի տեղից միւսը շարժուել.—*մարդ, գազան, թռչուն, անասուն, գեռուն, միջատ*—*շնչաւոր առարկաներ են։*

Իսկ *անշունչ* կոչւում են այն առարկաները, որոնք իրանց կամքով չեն կարող շարժուել.—*քար, փայտ, տուն, գիրք*—*անշունչ առարկաներ են։*

Մտաւոր առարկաների մէջ էլ կան այնպիսիները, որ թէև մենք մտքով ենք ըմբռնում, բայց առանձին գոյութիւն ունին—*հոգի, հրեշտակ, Աստուած.* կան էլ այնպիսիները, որոնք ուրիշ առարկաներից վեր առած յատկութիւններ ու գործողութիւններ են,—*քաջութիւն, բարութիւն, կարօտութիւն, միաբանութիւն.* սրանք կոչւում են նաև *վերացական։*

---

§ 7. *Գոյական առարկաների սեռը։*

Գոյական անունները *չորս սեռ* ունին—*արական, իգական, հասարակ* և *չէզոք։*

Բոլոր *արու* առարկաների անունները *արական սեռի* են,—*հայր, եղբայր, փեսայ, աքաղաղ, խոյ*—*արական սեռի* են։

Բոլոր էգ առարկաների անունները իգական սեռի են—մայր, քոյր, հարսն, կին, մատակ, հաւ, մաքի,—իգական սեռի են։

Կան անուններ էլ, որոնք միանգամայն թէ արական և թէ իգական առարկաների կարող են պատկանել և կոչւում են հասարակ սեռի—.ձի, մարդ, երեխայ, աղաւնի—հասարակ սեռի անուններ են։

Այն անշունչ և վերացական առարկաների անունները, որոնք ոչ արական կարող են լինել և ոչ իգական, կոչւում են չէզոք,—տուն, քար, ծառ, թուղթ, մատիտ,—չէզոք սեռի անուններ են։

---

§ 8. *Գոյական անունների թիւը։*

Գոյական անունները երկու թիւ ունին—*եզակի* և *յոգնակի*։

Եզակի թիւը ցոյց է տալիս մի առարկայ, իսկ յոգնակին—շատ առարկաներ,—մարդ, քար, տուն, սունկ—*եզակի* են, իսկ մարդիկ, քարեր, տներ, սունկեր—*յոգնակի*։

---

§ 9. *Գոյական անունների հոլովները։*

Գոյական անունները եօթն հոլով ունին, որոնք պատասխանում են հետեւեալ հարցերին.

1. Ուղղական—*ով, ինչ,*	աշակերտ	քար
2. Սեռական—*ում, ինչի,*	աշակերտի	քարի
3. Տրական—*ում, ինչի (ն)*	աշակերտի (ն)	քարի (ն)
4. Հայցական—*ում, ինչը,*	աշակերտին	քարը

5. Բացառական—*ումից, ինչից*	աշակերտից,	քարից
6. Գործիական—*ումով, ինչով*	աշակերտով,	քարով
7. Ներգոյական { *ումում, ինչում*	աշակերտում,	քարում
ում մէջ, ինչի մէջ	աշակերտի մէջ,	քարի մէջ

Բացի սրանցից՝ կայ նաև մի հոլով—կոչական, որը նման է ուղղականին. Տէր, օգնիր ինձ։ Արամ, եկ այստեղ։ Տէր, Արամ—կոչական հոլով են։

Ով, ինչ և այլն հարցերը շնչաւոր առարկաներին են վերաբերում, իսկ ինչ ինչի եայլն—անշունչ։

§ 10. *Հոլովում։*

Գոյական անունները փոփոխւում են ա) *հոլովով* և բ) *թուով*։ Այս փոփոխումը կոչւում է *հոլովում*։

Հոլովումը լինում է *կանոնաւոր* և *անկանոն*։

Կանոնաւոր հոլովումը չորս է. նրանք որոշւում են եզակի թուի սեռական հոլովի վերջաւորութիւններով։

Առաջին կանոնաւոր հոլովման սեռականը վերջանում է *ի*, երկրորդինը—*ու*, երրորդինը—*ան կամ կայ*։ չորրորդինը—*ուան կամ կայ*։

Ա. Ս. Ղ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Բ. Ա. Պետական Գրադարան
1922
Ա. ԱՅԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ

§ 11. *Առաջին կանոնաւոր հոլովում։*

(*ի*)

	Եզակի	թիւ
Ուղ.	աշակերտ	քար
Ս.	աշակերտի	քարի
Տ.	աշակերտի (ն)	քարի (ն)
Հ.	աշակերտին	քար (ը)
Բ.	աշակերտից	քարից
Գ.	աշակերտով	քարով
Ն.	{ աշակերտում	{ քարում
	{ աշակերտի մէջ	{ քարի մէջ

	Յ ո գ ն ա կ ի թ ի ւ	
Ուղ.	աշակերտներ	քարեր
Ս.	աշակերտների	քարերի
Տ.	աշակերտների (ն)	քարերի (ն)
Հ.	աշակերտներին	քարեր (ը)
Բ.	աշակերտներից	քարերից
Գ.	աշակերտներով	քարերով
Ն.	աշակերտներում աշակետների մէջ	քարերում քարերի մէջ

Այսպէս հոլովւում են զոյական անունների մեծ մասը։

---

§ 12. *Երկրորդ կանոնաւոր հոլովում։*

(ու)

	Ե զ ա կ ի թ ի ւ	
Ուղ.	աղաւնի	մատանի
Ս.	աղաւնու	մատանու
Տ.	աղաւնու (ն)	մատանու (ն)
Հ.	աղաւնուն	մատանին
Բ.	աղաւնուց	մատանուց
Գ.	աղաւնով	մատանով
Ն.	աղաւնու մէջ	մատանում մատանու մէջ

	Յ ո գ ն ա կ ի թ ի ւ	
Ուղ.	աղաւնիներ	մատանիներ
Ս.	աղաւնիների	մատանիների
Տ.	աղաւնիների (ն)	մատանիների (ն)
Հ.	աղաւնիներին	մատանիներ (ը)
Բ.	աղաւնիներից	մատանիներից
Գ.	աղաւնիներով	մատանիներով
Ն.	աղաւնիների մէջ	մատանիներում մատանիների մէջ

Այս հոլովման վրայ հոլովւում են բոլոր *ի* վերջացող զոյական անունները. միավանկ բառերի մէջ *ի* վերջաւորութիւնը հոլովուելիս մնում է։

Ի վերջացող զոյական անուններից միքանիսը, ինչպէս նաև նոյն վերջաւորութեամբ հայ և օտարազգի յատուկ անունները, հոլովուելիս իրանց վերջաւորութիւնները պահում են և հոլովւում առաջին հոլովման վրայ, օր. *ածելի, Անի, Կրիսպի* և այլն։

---

§ 13. Երրորդ կանոնաւոր հոլովում։
(ան կամ եան)

	Եզակի	
Ուղ.	տուն	տէրութիւն
Ս.	տան	տէրութեան
Տ.	տան (ը)	տէրութեան (ը)
Հ.	տուն (ը)	տէրութիւն (ը)
Բ.	տանից	տէրութիւնից
Գ.	տնով	տէրութիւնով (թեամբ)
Ն.	տնում տան մէջ	տէրութեան մէջ

	Յոգնակի։	
Ուղ.	տներ	տէրութիւններ
Ս.	տների	տէրութիւնների
Տ.	տների (ն)	տէրութիւնների (ն)
Հ.	տներ (ը)	տէրութիւններ (ը)
Բ.	տներից	տէրութիւններից
Գ.	տներով	տէրութիւններով
Ն.	տներում տների մէջ	տէրութիւնների մէջ

Այս հոլովման վրայ հոլովւում են ուն վերջացած գոյական անունները, բացի հուն և ղուն և մէկ էլ այն բառերից, որոնց մէջ ուն վերջաւորութիւնը ածանցական մասնիկ է, օր. թռչուն, սողուն և այլն։

Երրորդ հոլովման պէս հոլովւում են նաև ում վեր-

ջացած գոյական անունները, որոնք միևնոյն ժամանակ հոլովւում են և առաջին հոլովման վրայ, օր. օձում՝, օձման կամ օձումի և այլն։

Բացի այդ՝ այս հոլովման վրայ հոլովւում են այն գոյական անունները, որոնց վերջում ն տառն անյայտացել է—դուռ (ն), մուկ (ն), թոռ (ն) և այլն։

Այս կարգի բառերից միքանիսը հոլովւում են միևնոյն ժամանակ և առ. հոլովման վրայ, օր դ ա ռ, դ ա ռ ա ն կամ դ ա ռ ի։ Կան և այնպիսիները, որոնք միմիայն առ. հոլովման վրայ են հոլովւում, – ոտ, կաթ, մատ, անձն, մառն։

Տէրութիւն բառի նման հոլովւում են բոլոր թիւն վերջացող գոյական անունները։

Թիւն վերջացող յատուկ անունները հոլովւում են առ. հոլովման վրայ։

§ 14. Չորրորդ կանոնաւոր հոլովում։
(ուայ-ուան)

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղ.	գիշեր	գիշերներ
Ս.	գիշերուայ-ուան	գիշերների
Տ.	գիշերուան	գիշերների (ն)
Հ.	գիշեր (ը)	գիշերներ (ը)
Բ.	գիշերուանից	գիշերներից
Գ.	գիշերով	գիշերներով
Ն.	գիշերում գիշերուայ մէջ	գիշերներում գիշերների մէջ

Այսպէս հոլովւում են բոլոր ժամանակ ցոյց տուող գոյական անունները. բայց սրանցից միքանիսը միևնոյն ժամանակ հոլովւում են և առ. հոլովման վրայ։

§ 15. Անկանոն հոլովումներ։

Կան գոյական անուններ, որոնք հոլովուելիս եզակի կամ յոգնակի թուում ընդհանուր կանոնից շեղում են, ուստի և կոչւում են *անկանոն հոլովուող բառեր*. օրինակ, *եզակի* թուում շեղւում են՝ հայր, մայր, եղբայր, քոյր, տէր, կին, աներ, ընկեր, սէր, Աստուած եայլն, ինչպէս նաև սրանցից բարդուած բառերը. *յոգնակի* թուում՝ հայ, յոյն, հրէայ, քաղաքացի, կարնեցի, ծնող, աղջիկ, կին, ուսումն, մարդ եայլն։

Սակայն այս բառերը շատ անգամ հոլովւում են և կանոնաւոր հոլովման վրայ։

Կան նաև շատ գոյական անուններ, որոնք հոլովուելիս իրանց վերջին վանկում եղած ձայնաւորները, մանաւանդ *ի, ու, իւ*, կամ կորցնում են, կամ փոխում, ուստի և կոչւում են *կորուածք* և *փոխուածք* հոլովուող բառեր։

ՊԱՏԿԵՐ ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄԱՆ։

	ա.) Եզակի թիւ		
Ուղ.	հայր	քոյր	սէր
Ս.	հօր	քրոջ	սիրոյ
Տ,	հօրը	քրոջը	սիրոյ (սիրոյն)
Հ.	հօրը	քրոջը	սէր (ը)
Բ.	հօրից	քրոջից	սիրուց
Գ.	հօրով (հօր հետ)	քրոջով (քրոջ հետ)	սիրով
Ն.	հօր մէջ	քրոջ մէջ	(սիրում (սիրոյ մէջ

	բ. Յոգնակի թիւ			
Ուղ.	հայք (հայեր)	յոյնք (ներ)	հրէայք (ներ)	վանեցիք
Ս.	հայոց	յունաց	հրէից	վանեցոց
Տ.	հայոց	յունաց	հրէից	վանեցոց (ը)
Հ.	հայերին	յոյներին	հրէաներին	վանեցոց
Բ.	հայերից	յոյներից	հրէաներից	վանեցիներից
Գ.	հայերով	յոյներով	հրէաներով	վանեցիներով
Ն.	(հայերում (հայերի մէջ	յոյներում յոյների մէջ	հրէաներում հրէաների մէջ	վանեցիներում վանեցիների մէջ

ԿՈՐՈՒԱԾՔԱՐԲ ԵՒ ՓՈՓՈԽԱԾՔԱՐԲ ՀՈԼՈՎՈՒՄ։

	Եզակի թիւ		
Ուղ.	մարմին	ջուր	պատիւ
Ս.	մարմ՚նի	ջ՚րի	պատուի
Տ.	մարմ՚նի (ն)	ջ՚րի (ն)	պատուի (ն)
Հ.	մարմին (ը)	ջուր (ը)	պատիւ (ը)
Բ.	մարմ՚նից	ջ՚րից	պատուից
Գ.	մարմ՚նով	ջ՚րով	պատուով
Ն.	(մարմ՚նում (մարմ՚նի մէջ	ջ՚րում ջ՚րի մէջ	պատուում պատուի մէջ

Յոգնակի թիւում վերոյիշեալ ձայնաւորները երբեմն մնում են, երբեմն կորչում։

Բ.) ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ։

§ 16. Ի՞նչ է ածական անունը։

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների որպիսութիւնը կամ յատկութիւնը, կոչւում են *ածական անուն*։

Ածական անունը պատասխանում է *ի՞նչպիսի* կամ

ոպիսի և որ հարցերին,—կապոյտ երկինք, գեղեցիկ դէմք, կարմիր խնձոր,—կապոյտ, գեղեցիկ, կարմիր— ածական անուններ են։

Ածական անունները լինում են երկու տեսակ—*որակական և յարաբերական։*

---

§ 17. *Որակական ածական անունները։*

Որակական ածականները ցոյց են տալիս առարկաների *բնական որպիսութիւնը։—Գեղեցիկ, տգեղ, բարձր, հարթ—որակական ածական անուններ են։*

Որակական ածականներն ունին երեք *համեմատութեան աստիճանները—դրական, բաղդատական, գերադրական։*

ա.) Դրական աստիճանը ցոյց է տալիս առարկայի *պարզ որպիսութիւնը, առանց համեմատելու նրան ուրիշ առարկաների հետ—բարի մարդ, գեղեցիկ տուն, փոքր սեղան։*

բ.) Բաղդատական աստիճանը, համեմատելով առարկաների *որպիսութիւնը, ցոյց է տալիս նրանցից մէկի կամ միւսի որպիսութեան առաւելութիւնը կամ նուազութիւնը։*

Սա կազմւում է դրական աստիճանի վրայ *աւելի* բառն աւելացնելով—*աւելի բարի մարդ, աւելի գեղեցիկ տուն, աւելի փոքր սեղան։*

գ.) Գերադրական աստիճանը ցոյց է տալիս, թէ մի առարկայ *որպիսութեան կողմից իւր նմաններից գերազանց է կամ շատ գերազանց սաստիկ է։*

Սա կազմւում է դրական աստիճանի վրայ *ամենա մասնիկը և շատ շատ գերազանց, սաստիկ, անչափ* բառերն աւելացնելով—*ամենաբարի կամ շատ գերազանց բարի մարդ, ամենագեղեցիկ կամ շատ գեղեցիկ տուն, ամենափոքր կամ սաստիկ փոքր սեղան։*

§ 18. *Յարաբերական ածական անունները։*

Յարաբերական ածական անունները ցոյց են տալիս առարկաների մէջ եղած *յարաբերութիւնը—նիւթը, տեղը, ժամանակը, ում պատկանելը,—քարէ տուն, պարսկական երկիր, հայկական լեզու, երեկոյեան ժամերգութիւն։*

Յարաբերական ածական անունները համեմատութեան աստիճաններ չունին. չի կարելի ասել՝ *աւելի քարէ տուն, ամենահայկական լեզու, և այլն։*

---

§ 19. *Ածական անունների հոլովումը։*

Հայերէն լեզուի մէջ ածական անունները, գոյականների հետ վարուելիս՝ միշտ նախադասա են դրւում և չեն հոլովւում, իսկ երբ միայնակ են գործածւում, վարւում են՝ իբրև գոյական և հոլովւում են,—*աղքատ մարդ, աղքատ մարդու, աղքատ մարդուց և այլն. աղքատ, աղքատի, աղքատից, աղքատով, և այլն։*

Գ. ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 20. *Ի՞նչ է թուական անունը եւ քանի՞ տեսակ է լինում։*

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների *թիւը* կամ *կարգը*, կոչւում են *թուական անուն*։

Թուական անունները երկու տեսակ են լինում՝— 1) *քանակական* և 2) *դասական*։

1) Քանակական թուական անունները ցոյց են տալիս առարկաների *պարզ թիւը* և պատասխանում են *քանի՞* կամ *որքա՞ն* հարցերին։

2) Դասական թուական անունները ցոյց են տալիս առարկաների *կարգը* (դասը) և պատասխանում են *ո՞ր* կամ *ո՞րերորդ* հարցերին։

Օրինակ—քանակական - *մէկ, երկու, երեք, չորս,* և այլն։

Դասական— *առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ,* և այլն։

Քանակական թուական անունների շարքին են պատկանում նաև *կոտորակականները*, որոնք ցոյց են տալիս ամբողջի մի կամ միքանի մասը—*մի քառորդ, երեք քառորդ, երկու երրորդ* և այլն։

Թուական անունները գործ են ածւում թէ զոյականապէս և թէ ածականապէս։

Զոյականապէս վարուելիս նրանք փոփոխւում են հոլովով և թուով, իսկ ածականապէս վարուելիս՝ անփոփոխ են մնում։

Օրինակ՝ չորս մարդ, չորս մարդու, չորս մարդուց և այլն։

Չորսը, չորսի, չորսին, չորսով և այլն։

Դ. ԴԵՐԱՆՈՒՆ

§ 21. *Ի՞նչ է դերանունը եւ քանի՞ տեսակ է լինում։*

Այն բառերը, որոնք գործ են ածւում զոյական և ածական անունների տեղ, կոչւում են *դերանուն*։— *Ես, դու, նա, իւր, իմ, այս, այսպիսի* և այլն—դերանուններ են։

Այն դերանունները, որոնք զոյական անունների տեղ են դրւում, կոչւում են *զոյական դերանուններ*, իսկ նրանք, որոնք դրւում են ածական անունների տեղ, կոչւում են *ածական դերանուններ*։

Դերանուններն, իրանց մասնաւոր նշանակութիւններին նայելով, լինում են *եօթը* տեսակ։

1) *Անձնական* կամ *էական*—*ես, դու, ինքն* (*նա*)։

2) *Ստացական*—*իմ, քո, մեր, ձեր, իւր*։

3) *Հարցական*—*ո՞վ, ի՞նչ, քա՞նի, ո՞րքան, ո՞րչափ, ի՞նչպիսի, ո՞րպիսի*։

4) *Ցուցական*—*սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսչափ, այդչափ, այնչափ*։

5) *Յարաբերական*—*որ*։

6) *Որոշեալ*—*ամենքը, բոլորը, ամեն մէկը, իւրաքանչիւրը*։

7) *Անորոշ*—*ոմն, ոք, մի ոք, մի ինչ, ոչ ոք, ոչինչ, այլոք, այլինչ, միւս, այլ*։

---

§ 22. *Դիմորոշ յօղեր։*

Դերանունների արժատական տառերը—*ս, դ, ն, (ը)*, որոնք դրուելով հոլովուող բառերի վրայ՝ որոշում են նրանց դէմքերը, կոչւում են *դիմորոշ յօղեր*։

Ս — որոշում է առաջին դէմքին վերաբերեալ բանը — *հայրս, ուսուցիչս։*

Դ — երկրորդ դէմքին վերաբերեալ բանը — *հայրդ, ուսուցիչդ։*

Ն — երրորդ դէմքին վերաբերեալ բանը — *հայրն (ը), ուսուցիչն (ը)։*

---

§ 23. *Դերանունների հոլովումը։*

Գոյական դերանուններից շատերը հոլովում են գոյականների նման, գլխաւորապէս առաջին կանոնաւոր հոլովման վրայ, իսկ ածական դերանունները կամ ամենևին չեն հոլովում և կամ յօդով են հոլովում։

Գոյական դերանուններից՝ *ես, դու, ինքն, նա, ով* — իրանց առանձին հոլովումն ունին։

	Եզ. թ.	Յոգ. թ.	Եզ. թ.	Յոգ. թ.
Ուղ.	ես	մենք	դու	դուք
Ս.	իմ	մեզ	քո	ձեր
Տ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Հ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Բ.	ինձանից	մեզանից	քեզանից	ձեզանից
Գ.	ինձանով	մեզանով	քեզանով	ձեզանով
Ն.	ինձանում	մեզանում	քեզանում	ձեզանում

	Եզ. թ.	Յոգ. թ.	Եզ. թ.	Յոգ. թ.
Ուղ.	ինքն	իրանք	նա*)	նրանք
Ս.	իրա, իւր	իրանց	նրա	նրանց
Տ.	իրան	իրանց	նրան	նրանց
Հ.	իրան	իրանց	նրան	նրանց
Բ.	իրանից	իրանցից	նրանից	նրանցից
Գ.	իրանով	իրանցով	նրանով	նրանցով
Ն.	իրանում	իրանցում	նրանում	նրանցում

	Եզ. թ.	Յոգ. թ.
Ուղ.	ով	ովքեր
Ս.	ում	հոլովում չունի
Տ.	ում	
Հ.	ում	
Բ.	ումից	
Գ.	ումով	
Ն.	ումում	

*) Այսպէս հոլովում են նաև *սա, դա* դերանունները։

Ե. ԲԱՅ

§ 24. Ի՞նչ է բայը։

Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաների գործողութիւնը կամ դրութիւնը, կոչւում են բայ։— Աշակերտը կարդում է։ Ձունը պաղեց։

---

§ 25. Բայերի սեռերը։

Բայերը երեք սեռ ունին.

ա.) *Ներգործական*, որ ցույց է տալիս այնպիսի գործողութիւն, որն անցնում է ուրիշ առարկայի վրայ։— Որսորդն սպանեց արջին։

բ.) *Կրաւորական*, որ ցույց է տալիս այնպիսի գործողութիւն, որը մի առարկայ կրում է ուրիշից։— Յոյներն յաղթուեցին թուրքերից։

գ.) *Չեզոք*, որը ցույց է տալիս առարկայի դրութիւնը կամ այնպիսի գործողութիւն, որը չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ մնում է գործող անձի մէջ։—Աշակերտը նստեց իւր տեղը։

---

§ 26. Բայի եղանակները։

Բայի եղանակները չորս են.

ա.) *Անորոշ*, որը բայի սկզբնական ձևն է։ Սա ունի չորս վերջաւորութիւն—*ալ, ել, իլ, անալ*։—Գնալ, տեսնել։ Խօսել։ Բարկանալ։

բ.) *Սահմանական*, որը որոշում է, թէ ով և երբ է կատարում գործողութիւնը։—*Ես տեսնում եմ։ Դու կը կարդաս։ Նա խաղում էր։*

Սահմանական եղանակն ունի երեք ժամանակ— *ներկայ, անցեալ, ապառնի*։

գ.) *Հրամայական*, որն յայտնում է խօսողի հրամանը կամ խնդիրը, որ գործողութիւնը կատարուի կամ չը-կատարուի։—*Կարդա դասդ։ Մի գնար դուրս։*

դ.) *Ստորադասական*, որն յայտնում է խօսողի կասկածը գործողութեան կատարուելու մասին։— *Որ նստեմ, թէ որ գնանք։*

---

§ 27. Բայի ժամանակները։

Բայի ժամանակները երեք են.

ա.) *Ներկայ ժամանակ*, որ ցույց է տալիս, թէ գործողութիւնը *այժմ* է կատարւում։—*Կարդում է։*

բ.) *Անցեալ ժամանակ*, որ ցույց է տալիս, թէ գործողութիւնը *առաջ* էր կատարւում կամ արդէն կատարուել է։

Սա լինում է երկու տեսակ—*անցեալ անկատար* և *անցեալ կատարեալ*։—Աշակերտը *կարդում էր։* Աշակերտը *կարդաց։*

գ.) *Ապառնի ժամանակ*, որ ցույց է տալիս, թէ գործողութիւնը *յետոյ պէտք է* կատարուի։

Սա էլ լինում է երկու տեսակ—*պարզ* և *բաղադրեալ*։—Աշակերտը *կը կարդայ* (պարզ)։ Աշակերտը *պիտի կարդայ* (բաղ.)։

---

§ 28. Բայի դէմքերը եւ թուերը։

Բայը երեք դէմք ունի—*առաջին, երկրորդ, երրորդ*— (անձնական դերանունների համեմատ)։—*Ես կարդում եմ, դու կարդում ես, նա կարդում է։*

Թուերը երկուս են—եզակի և յոգնակի։—Խաղում է. Խաղում են։

---

§ 29. Դերբայ։

Բայերից առաջ են գալիս դերբայները, որոնք գործ են ածւում թէ իբրև բայ և թէ իբրև գոյական կամ ածական անուն։

Դերբայները չորս են։—

ա.) Անորոշ, որն ունի բայի անորոշ եղանակի վերջաւորութիւնները—ալ, ել, իլ, անալ։—Հարկաւոր չէ գնալ։ Կարող ես գրել։ Դպրոցում արգելուած է խօսել։ Ծուլանալը լաւ չէ։

բ.) Ներկայ, որը վերջանում է ող, ուղ։—Գնացող։ Փոփոխուող։

գ.) Անցեալ, որը վերջանում է ած (ուած) և ել։—Այդպիսի բան տեսած չեմ։ Քոյրս իւր դասն արդէն սովորել է։

դ.) Ապառնի, որը վերջանում է լու։—Գնալու ճանապարհը հարթ է։ Եղբայրս վաղը վերադառնալու է։

---

30. Խոնարհում։

Բայերը փոփոխւում են ա.) եղանակներով, բ.) ժամանակներով, գ.) դէմքերով և դ.) թուերով։

Բայերի այս փոփոխումը կոչւում է խոնարհում։

Խոնարհումը լինում է երկու տեսակ—կանոնաւոր և անկանոն։

§ 31. Օգնիչ բայեր եմ և լինել։

ա. եմ

Սահմանական եղանակ			
Ներկայ ժամ.	Եզ. թ. Ես եմ Դու ես Նա է. Յոգ. թ. Մենք ենք Դուք էք Նոքա են	Անցեալ անկատար	Եզ. թ. Ես էի Դու էիր Նա էր. Յոգ. թ. Մենք էինք Դուք էիք Նոքա էին

բ. լինել.

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ես լինում եմ Դու լինում ես Նա լինում է.	Մենք լինում ենք Դուք լինում էք Նոքա լինում են։

Անցեալ անկատ.

Ես լինում էի Դու լինում էիր Նա լինում էր.	Մենք լինում էինք Դուք լինում էիք Նոքա լինում էին։

Անցեալ կատարեալ

Ես եղայ	Մենք եղանք
Դու եղար	Դուք եղար
Նա եղաւ.	Նոքա եղան։

Ապառնի պարզ

Ես կըլինիմ	Մենք կըլինինք
Դու կըլինիս	Դուք կըլինիք
Նա կըլինի.	Նոքա կըլինին։

Ապառնի բաղադրեալ

Ես պիտի լինիմ	Մենք պիտի լինինք
Դու պիտի լինիս	Դուք պիտի լինիք
Նա պիտի լինի.	Նոքա պիտի լինին։

Հրամայական եղանակ

Դու { եղէր / մի լինիր.	Դուք { եղէք / մի լինիք։

———

Ստորադասական եղանակ

Ես որ լինիմ	Մենք որ լինինք
Դու որ լինիս	Դուք որ լինիք
Նա որ լինի.	Նոքա որ լինին։

Դերբայ

Անորոշ	լինել
Ներկայ	եղող
Անցեալ	եղել, եղած
Ապառնի	լինելու

———

§ 32. *Կանոնաւոր խոնարհում։*

Անորոշ եղանակ

1) *ալ* 2) *կլ*

Կարդալ	Սիրել

Սահմանական եղանակ

Ներկայ ժամ.

Ես կարդում եմ	սիրում եմ
Դու կարդում ես	սիրում ես
Նա կարդում է.	սիրում է.
Մենք կարդում ենք	սիրում ենք
Դուք կարդում էք	սիրում էք
Նոքա կարդում են։	սիրում են։

Անցեալ անկատար

Ես կարդում էի	սիրում էի
Դու կարդում էիր	սիրում էիր
Նա կարդում էր.	սիրում էր.
Մենք կարդում էինք	սիրում էինք
Դուք կարդում էիք	սիրում էիք
Նոքա կարդում էին։	սիրում էին։

Անցեալ կատարեալ

Ես սիրեցի	կարդացի
Դու սիրեցիր	կարդացիր
Նա սիրեց.	կարդաց.
Մենք սիրեցինք	կարդացինք
Դուք սիրեցիք	կարդացիք
Նոքա սիրեցին։	կարդացին։

Ապառնի ապրզ

Ես կըկարդամ	կըսիրեմ
Դու կըկարդաս	կըսիրես
Նա կըկարդայ	կըսիրէ
Մենք կըկարդանք	կըսիրենք
Դուք կըկարդաք	կըսիրիք
Նոքա կըկարդան	կըսիրեն

Ապառնի բաղադրեալ

Ես պիտի կարդամ	պիտի սիրեմ
Դու » կարդաս	» սիրես
Նա » կարդայ	» սիրէ .
Մենք » կարդանք	» սիրենք
Դուք » կարդաք	» սիրէք
Նոքա » կարդան	» սիրեն

Հրամայական եղանակ

Դու	կարդա՛	սիրիր
	մի՛ կարդար	Մի՛ սիրիր
Դուք	կարդացէ՛ք	սիրեցէ՛ք
	մի՛ կարդաք	մի՛ սիրէք

Ստորադասական եղանակ

Ես	որ	կարդամ	որ սիրեմ
Դու	»	կարդաս	» սիրես
Նա	»	կարդայ	» սիրէ
Մենք	»	կարդանք	» սիրենք
Դուք	»	կարդաք	» սիրէք
Նոքա	»	կարդան	» սիրեն

Դ ե ր բ ա յ

ա. Անորոշ

Կարդալ	սիրել

բ. Ներկայ

Կարդացող	Սիրող

գ. Անցեալ

Կարդացել Կարդացած	Սիրել Սիրած

դ. Ապառնի

Կարդալու	Սիրելու

Անորոշ եղանակ

3) իլ 4) անալ.

Խօսիլ	Բարկանալ

Սահմանական եղանակ

Ներկայ ժամանակ.

Ես	խօսում եմ	բարկանում եմ
Դու	խօսում ես	բարկանում ես
Նա	խօսում է	բարկանում է
Մենք	խօսում ենք	բարկանում ենք
Դուք	խօսում էք	բարկանում էք
Նոքա	խօսում են։	բարկանում են։

Անցեալ անկատար

Ես խօսում էի	բարկանում էի
Դու խօսում էիր	բարկանում էիր
Նա խօսում էր.	բարկանում էր.
Մենք խօսում էինք	բարկանում էինք
Դուք խօսում էիք	բարկանում էիք
Նոքա խօսում էին։	բարկանում էին։

Անցեալ կատարեալ

Ես խօսեցի	բարկացայ
Դու խօսեցիր	բարկացար
Նա խօսեց (աւ).	բարկացաւ.
Մենք խօսեցինք	բարկացանք
Դուք խօսեցիք	բարկացաք
Նոքա խօսեցին (ան)։	բարկացան։

Ապառնի պարզ.

Ես կըխօսեմ	կըբարկանամ
Դու կըխօսես	կըբարկանաս
Նա կըխօսէ (ի)	կըբարկանայ
Մենք կըխօսենք	կըբարկանանք
Դուք կըխօսէք	կըբարկանաք
Նոքա կըխօսեն (ին)	կըբարկանան

Ապառնի ըստաղրեալ

Ես պիտի խօսեմ	պիտի բարկանամ
Դու » խօսես	» բարկանաս
Նա » խօսէ (ի)	» բարկանայ
Մենք » խօսենք	» բարկանանք
Դուք » խօսէք	» բարկանաք
Նոքա » խօսեն	» բարկանան

Հրամայական եղանակ

Դու	խօսիր մի խօսիր	բարկացիր մի բարկանար
Դուք	խօսեցէք մի խօսէք	բարկացէք մի բարկանաք

Ստորադասական եղանակ

Ես որ խօսեմ	որ բարկանամ
Դու » խօսես	» բարկանաս
Նա » խօսէ (ի)	» բարկանայ
Մենք » խօսենք	» բարկանանք
Դուք » խօսէք	» բարկանաք
Նոքա » խօսեն	» բարկանան

ԴԵՐԲԱՅ

ա. Ներկայ

խօսող	բարկացող

բ. Անցեալ

խօսել խօսած	բարկացել բարկացած

գ. Ապառնի

խօսելու	բարկանալու

§ 33. *Անկանոն խոնարհում։*

Այն բայերը, որոնք խոնարհուելիս շեղուում են ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն խոնարհում ունեցող բայեր, ինչպէս օրինակ՝ *տարուել, դրուել, ուտել, գալ* բայերը։

Անցեալ		Կատարեալ	
տարուել	*դրուել*	*ուտել*	*գալ*
Տարուեցայ	դրուեցայ	կերայ	եկայ
Տարուեցար	դրուեցար	կերար	եկար
Տարուեցաւ.	դրուեցաւ.	կերաւ.	եկաւ.
Տարուեցանք	դրուեցանք	կերանք	եկանք
Տարուեցաք	դրուեցաք	կերաք	եկաք
Տարուեցան։	դրուեցան։	կերան։	եկան։

Զ. ՄԱԿԲԱՅ

§ 34. *Ինչ է մակբայը։*

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութեան կամ դրութեան զանազան պարագաները, այսինքն՝ *կերպը, քանակութիւնը, տեղը, ժամանակը, պատճառը կամ նպատակը* եայլն, կոչւում են *մակբայ։*

§ 35. *Մակբայների տեսակները։*

Մակբայները բաժանւում են հետեւեալ գլխաւոր տեսակների.

1. *Որակական*—ինչպէս, այսպէս, այդպէս, այնպէս, սաստիկ, բոնի, կամայ, ակամայ եայլն։

Որակական մակբայներից նրանք, որոնք առաջ են գալիս որակ. ածական անուններից, ունին համեմատութեան աստիճաններ։

2. *Քանակական*—այսչափ, այդչափ, որքան, շատ, սակաւ, աւելի շատ, եայլն։

3. *Տեղական*—այստեղ, այդտեղ, այնտեղ, հեռու, մօտիկ, ուր, որտեղ, ներսը, դուրսը, եայլն։

4. *Ժամանակական*—այժմ, յետոյ, երէկ, վաղուց, միշտ, եայլն։

Է. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

§ 36. *Ինչ է նախադրութիւնը։*

Այն բառերը, որոնք՝ դրուելով մի որեէ հոլովի վրայ (բացի ուղղականից), ցոյց են տալիս նրանց փոխադարձ յարաբերութիւնները, կոչւում են *նախադրութիւն*, օրինակ՝ *վրայ, հետ, մօտ, յետոյ, հատար, ներքեւ, վերեւ, առանց, մէջ,* եայլն։

Ը. ՀԱՂԿԱՊ

§ 37. *Ի՞նչ է հաղկապը։*

Այն բառերը, որոնք մեր խօսակցութեան ժամանակ կապում են մեր ամբողջ խօսակցութիւնները (մտքերը) կամ նրանց այլեայլ մասերը միմեանց հետ, կոչւում են *հաղկապ*, օր. ես կարդում եմ, *իսկ* դու գրում։ Ես *եւ* դու կարդում *ու* գրում ենք։

§ 38. *Հաղկապների տեսակները։*

Հաղկապները լինում են՝

ա.) Արմատական—*եւ* (*ու*), *իսկ*, *քայց*, *այլ*, *էլ*, *կամ*, *թէ*, *սակայն*։

բ.) Ածանցեալ, որոնք առաջ են գալիս բանի միւս մասունքներից—*այսինքն*, *այնուամենայնիւ*, *որպէսզի*, *կարծես թէ*, *եթէ թէ*, *եայլն*։

Թ. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

§ 39. *Ի՞նչ է ձայնարկութիւնը։*

Այն բառերը, որոնք արտայայտում են մեր հոգու զանազանատեսակ կրքերը—վիշտը, նեղութիւնը, երկիւղը, զարմանքը, ափսոսանքը, ուրախութիւնը, ցանկութիւնը, զղուանքը, *եայլն*, կոչւում են *ձայնարկութիւն*, կամ *միջարկութիւն*. օրինակ՝ *ա՜խ*, *ո՜հ*, *վա՜յ*, *ա՜յ*, *երանի՜ թէ*, *ախո՜ն*, *վա՜յ թէ*, *եայլն*։

Ձայնարկութիւնների թուին են պատկանում և այն հնչիւնները, որոնցով մենք արտայայտում ենք անշունչ առարկաների կամ կենդանիների հանած ձայները—*թը-ըխկ-ըըխկ*, *փիս-փիս*, *միա՜ու*, *ա՜ու-ա՜ու*, *եայլն*։

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

§ 1. *Ի՞նչ է նախադասութիւնը։*

Իւրաքանչիւր մի միտք կամ դատողութիւն, որ արտայայտում ենք բառերով, կոչւում է *բան* կամ *նախադասութիւն*։—Աշակերտը կարդում է։ Քարն ընկաւ։ Ատուած մեծ է,—*նախադասութիւններ* են։

§ 2. *Նախադասութեան գլխաւոր անդամները։*

Իւրաքանչիւր նախադասութիւն ունի երկու գլխաւոր անդամներ—*ենթակայ* և *ստորոգեալ*։

ա.) *Ենթական* այն առարկան է, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ։ Վերոյիշեալ նախադասութիւնների մէջ *աշակերտը*, *քարը*, *Ատուած*—ենթականեր են։

բ.) *Ստորոգեալն* այն է, *ինչ* որ ասւում է ենթակայի մասին.—միևնոյն նախադասութիւնների մէջ—*կարդում է*, *ընկաւ*, *մեծ է*—ստորոգեալներ են։

Նախադասութեան մէջ ենթական հեշտութեամբ կարելի է գտնել, ստորոգեալի հետ տալով *ով* և *ինչ* հարցերը։—*Ով* է կարդում։—*Աշակերտը*։ *Ի՞նչն* ընկաւ։—*Քարը*։

Իսկ ստորոգեալը գտնելու համար հարկաւոր է ենթակայի հետ այս հարցերը տալ—*ինչ է անում*, *ինչ եղաւ*, *ինչպէս է*, *ինչ է* (*ինչ բան է*)։—Աշակերտն *ինչ է անում*։—*Կարդում է*։ Քարն *ինչ եղաւ*։—*Ընկաւ*։ Ատուած *ինչպէս է*։—*Մեծ է*։ Խնձորն *ինչ է* (*ինչ բան է*)։—*Պտուղ է*։

Գրելիս ենթական ստորոգեալից ոչ մի կէտով չէ

§ 3. *Նախադասության երկրորդական անդամները։*

Բացի գլխաւոր անդամներից նախադասության մէջ լինում են նաև *երկրորդական* անդամներ։

Նախադասության երկրորդական անդամները չորս տեսակ են լինում։

ա.) *Որոշիչ* կամ *յատկացուցիչ բառեր։*

բ.) *Խնդիրներ* կամ *լրացուցիչ բառեր։*

գ.) *Պարագայական* կամ *հանգամանական բառեր։*

դ.) *Կոչական բառեր։*

---

§ 4. *Որոշիչ կամ՝ յատկացուցիչ բառեր։*

Որոշիչ կամ *յատկացուցիչ* կոչւում են այն բառերը, որոնք որոշում են մի առարկայ ուրիշ իւր նման առարկաներից՝ ցոյց տալով նրա *որպիսութիւնը* կամ *պատկանելութիւնը։*

Նրանք պատասխանում են այս հարցերին՝—*որպիսի* կամ *ինչպիսի, քանի, որ, ում, ինչի։*—*Հար մարդիկ պատժի արժանի են։ Եղբայրս կրթող դասարանում է։ Մանուկի գլուխը ցաւում է։ Հուսաւուտի տպակին կոտրուեց։*

Որոշիչ բառերը որոշեալից *ոչ մի* կէտով չեն բաժանւում։

---

§ 5. *Խնդիրներ կամ՝ լրացուցիչ բառեր։*

Խնդիրներ կամ *լրացուցիչներ* կոչւում են այն բառերը, որոնք լրացնում են ստորոգեալի միտքը։

Նրանք պատասխանում են այս հարցերին.

Ո՞ւմ՝ ինչ(ը) (Հայց. հոլ.)—*Որսորդն սպանեց արջին։ Ես դանակ գնեցի։*

Ո՞ւմ՝, ինչի՞։ (Տրակ. հոլ.) *Աշակերտը գիրքը տուեց ուսուցչին։ Հանասէր աշակերտը զովեստի արժանի է։*

Ո՞ւմնից, ինչի՞ց (Բաց. հոլ.)։—*Նա եղբօրից նամակ ստացաւ։ Մարդու առողջութիւնը հարստութիւնից բարձը է։*

Ո՞ւմով, ինչով։ (Գործ. հոլ.)։—*Մի մարդով գործը գլուխ չի գալ։ Աշակերտը մատիտով գրում է։*

Խնդիրները կամ լրացուցիչ բառերը ստորոգեալից և նախադասության միւս անդամներից *ոչ մի* կէտով չեն բաժանւում։

---

§ 6. *Հանգամանական կամ պարագայական բառեր։*

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկայի գործողության կամ գրության զանազան հանգամանքները, կոչւում են *հանգամանական* կամ *պարագայական* բառեր։

Հանգամանական կամ պարագայական բառերը ցոյց են տալիս.

ա.) Գործողության *տեղը* և պատասխանում են այս հարցերին.—*ո՞րտեղ, ո՞րտեղից, ո՞ւր։*—*Մայրս նստած է սենեակում։ Աշակերտները դպրոցից տուն եկան։*

բ) Գործողության *ժամանակը* և պատասխանում են այս հարցերին. *ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից մինչև ե՞րբ։*—*Ճաշից յետոյ հիւր կրգնամ։ Հինգ ժամ ճանապարհ գնացի։ Առաւօտից մինչև երեկոյ անձրև եկաւ։*

դ.) Գործողութեան պատճառը և նպատակը և պատասխանում է այս հարցերին՝ *ինչ պատճառով, ինչի համար, ինչից, ի՞նչ նպատակով։*—Զմրան երկիւղից գետը քար կտրեց։ Քոյրս գնաց գիրք գնելու։

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանւում։

---

§ 7. *Կոչական բառեր։*

Կոչական բառերը ցոյց են տալիս, թէ խօսողը ում է դառնում իւր խօսքով։—*Տէր*, ներիր ինձ, մեղաւորիս։ *Մանուկ, մանուկ*, ինձ չխաբես։

Երբ կոչական բառը նախադասութեան սկիզբը կամ վերջն է դրուած, ստորակէտով է բաժանւում միւս անդամներից. իսկ եթէ նա ընկած է լինում նախադասութեան մէջ, երկու ստորակէտի մէջ է առնւում։—*Տէր*, քեզ յայտնի են մեր մտքերն ու խորհուրդները։ Մեր մտքերն ու խորհուրդները յայտնի են քեզ, *Տէր*։ Քեզ յայտնի են, *Տէր*, մեր մտքերն ու խորհուրդները։

---

§ 8. *Համառօտ եւ ընդարձակ նախադասութիւններ։*

Այն նախադասութիւնը՝ որի մէջ կան միմիայն գլխաւոր անդամներ, կոչւում է *համառօտ*. իսկ այն, որի մէջ բացի գլխաւոր անդամներից կան նաև երկրորդական անդամներ, կոչւում է *ընդարձակ*։—Աշակերտները կարդում են (համառ.)։ Մեր դասարանի աշակերտները այգում կարդում են իրանց դասը (ընդարձ.)։

---

§ 9. *Դիմաւոր եւ անդէմ նախադասութիւններ։*

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշուած է կամ մտքով հեշտութեամբ կարող է իմացուել, կոչւում է *դիմաւոր*։—Զկնորսներն իրանց ուռկանն են քաշում։ *Մայրիկ*, ինձ հաց տուր (*դու*) ուտելու։

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յայտնի չէ կամ բոլորովին անյայտ է, կոչւում է *անդէմ*։—*Ասում են*, երկրաշարժ կլինի։ *Ցրտից։ Անձրեւում է։*

---

§ 10. *Գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւններ։*

Այն նախադասութիւնը, որ ուրիշ նախադասութիւնից կախում չունի, կոչւում է *գլխաւոր*. իսկ այն նախադասութիւնը, որը գլխաւորից կախում ունի և նրան պարզաբանելու համար է դրուած, կոչւում է *երկրորդական*։—Երանի այն երկրին, որի *բնակիչները հասկանում են իրանց հարն ու քարին*։ Այս օրինակի մէջ երանի այն երկրին գլխաւոր նախադասութիւն է, իսկ *որի բնակիչները հասկանում են իրանց հարն ու քարին* —երկրորդական։

Երկրորդական նախադասութիւնները լինում են՝ ա.) ենթակայ,—*ով ականջ ունի լսելու, թող լսէ։* բ.) Յատկացուցիչ,—Զինաստանում մի օրէնք կայ, *որի զօրութեամբ կտրում են խաբեբաների ձեռքերը։* գ.) Լրացուցիչ,—*գիտնականներն արդէն հաստատել են, թէ լուսինն էլ մի գնդաձեւ մարմին է։* դ.) Պարագայական,—*երբ զարունը բացւում է, գիւղացիք սարն են տանում տաւարը։*

Երկրորդական նախադասութիւնները գլխաւորից բաժանւում են ստորակէտով։

---

§ 11. *Միջանկեալ նախադասութիւն։*

Այն նախադասութիւնը, որ ընկած է մի ուրիշ նախադասութեան մէջ և նրա ոչ մի անդամից կախում չունի, կոչւում է *միջանկեալ։* Մի անդամ (*յուլիս ամսին էր այդ*) օրը սաստիկ տաք էր։

Միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից բաժանւում է երկու ստորակէտով կամ փակագծերով։

---

§ 12. *Պարզ եւ բաղադրեալ նախադասութիւններ։*

Այն նախադասութիւնը, որի անդամներից ոչ մէկը կրկնուած չէ, այլ իւր մէջ մի պարզ միտք է պարունակում, կոչւում է *պարզ։*—Պարտիզպանն աշխատում է իւր պարտիզում—սա մի *պարզ* նախադասութիւն է։

Իսկ այն նախադասութիւնը, որ կազմուած է երկու կամ աւելի նախադասութիւններից, կոչւում է *բաղադրեալ։*

Բաղադրեալ նախադասութիւնը կազմւում է մի գլխաւոր և մէկ կամ մի քանի երկրորդական նախադասութիւններից։—Ո՛ւմ ասես, որ չի գրաւում անտառի գեղեցկութիւնը—*բաղադրեալ* նախադասութիւն է։

---

§ 13. *Միաւորեալ նախադասութիւն։*

Այն նախադասութիւնը, որը կազմուած է երկու կամ աւելի նախադասութիւնների միաւորութիւնից, կոչւում

է *միաւորեալ։*—Աշակերտները դպրոցում կարդում, գրում և նկարում են—*միաւորեալ* նախադասութիւն է։

Միաւորեալ նախադասութիւնների մէջ կարող են լինել միքանի ենթակայ, միքանի ստորոգեալ կամ մի քանի միատեսակ երկրորդական անդամ, որոնք, եթէ միմեանց հետ կապուած չեն եւ, ու շաղկապներով, իրարից ստորակէտներով են բաժանւում։

ՆԻՒԹԵՐ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.) ՄՐՋԻՒՆԸ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Մի անգամ մրջիւնը գնաց առուակից ջուր խմելու։ Յանկարծ ալիքը ներս քաշեց նրան։ Այդ միջոցին մի աղաւնեակ թռչում էր առուակի վրայով՝ մի ճիւղ կոցում բռնած։ Երբ տեսաւ նա մրջիւնի դառն վիճակը, խղճաց նրա վրայ և իսկոյն իւր բերանի ճիւղը ձգեց նրան։ Մրջիւնը նստեց ճիւղին և ազատուեց։ Այդ առաուակից մի քիչ հեռու որսորդը ցանցով թռչունները էր որսում։ Խեղճ աղաւնին մտաւ ցանցի տակ, որ միքանի հատիկ էլ ինքը ժողովէ։ Որսորդը պատրաստւում էր բռնել նրան ցանցով։ Մրջիւնը՝ նկատելով այդ, իսկոյն մօտ սողաց որսորդին և այնպէս տաստիկ կծեց նրա ոտքը, որ նա հառաչեց և վայր ձգեց ձեռքից ցանցը։ Այդպէս մեր աղաւնին թռաւ, ազատուեց։

Թարգ.

Բ.) ՊԱՊԸ ԵՒ ԹՈՌՆԻԿԸ

Սաստիկ ծերացել էր պապը։ Վատ էր տեսնում նա և ծանր լսում։ Ծերութիւնից արդէն նրա ձեռներն ու ոտները դողդողում էին։ Կերակուր ուտելիս նա կաթկաթացնում էր սպասը դդալից։ Այդ բանը դիւր չէր գալիս նրա որդուն ու հարսին. դրա համար էլ նրանք

չէին թողնում խեղճ ծերունուն իրանց հետ սեղան նստելու, այլ մի կաւէ ամանով առանձին էին կերակուր տալիս նրան։ Մի օր էլ ծերունու ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ և փշուր-փշուր եղաւ։ Այդ պատճառով էլ աւելի չարացան որդին ու հարսը և սկսեցին մի փայտէ ամանով կերակրել նրան։ Ծերունին մի փոքրիկ թոռնիկ ունէր։ Մի անգամ նրա հայրը տեսաւ, որ որդին, յատակի վրայ նստած, մի ինչ որ բան է շինում փայտից. «Այդ ինչ ես շինում, որդի,» — հարցրեց հայրը։—«Դուշ, հայրիկ,—պատասխանեց մանուկը.—երբ դու և մայրիկս ծերանաք, ես ձեզ սրանով պէտք է կերակրեմ»։ Լսելով այդ, հայրն ու մայրը իրար երես նայեցան և կարմրեցին։ Նրանք այնուհետև դադարեցան ծերունուն առանձին նստացնել և սկսեցին պատուով պահել նրան։—«Ինչ որ ցանես, այն կըհնձես,» —ասում է առածը։

Թարգ.

Գ.) ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԸ

Առաւօտ էր։ Արարատեան դաշտը և Մասիս լեռան սպիտակափառ գագաթը փայլում էին վարդագոյն շողերով՝ արևի առաջին ճառագայթների ներքև։ Արագածի պսակաձև գագաթը դեռ չէր երևում։ Նա պատած էր դեռ ձիւնի պէս սպիտակ մշուշով։ Կանաչազարդ դաշտավայրը վառւում էր ծիածանի ամենանուրբ գոյներով։ Փչում էր մեղմ հովիկը։ Ծաղիկները ժպտում էին։ Դալար խոտաբոյսերը ծփում ու ծածանւում էին և դաշտի խաղաղ տարածութիւնը օրօրւում էր սքանչելի ալէկոծութեամբ։

Բաֆֆի

Դ.) ԱՄԱՌ

Գալիս է ամառ, այրող եղանակ,
Անխոնջ վաստակի պտղի ժամանակ.
Իր աստուածեղէն ջերմութեան հոգին
Կենսատու շնչով ծաւալէ արփին։
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր.
Սաթի պէս դեղին կախուած է ողկոյզ.
Մանկտին գրաւում է շլոր, նուռ ու թուզ։
Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.
Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան.
Եւ արտօրայքի ծանրացած հասկեր
Խիստ հիանալի նկարեն պատկեր։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՊԵՏԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
именна. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0438466

5962